Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջը իրականացնում է ընդունելություն միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով:

Միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտությունների գծով՝

- Ֆինանսներ
- Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի)
- Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)
- Բանկային գործ
- Շուկայաբանություն
- Ապահովագրական գործ
- Զբոսաշրջություն (ըստ ճյուղերի)
- Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում

Նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրով ընդունելությունը կատարվում է նշված մասնագիտության գծով՝

- Խոհարարական գործ

Քոլեջի կրթական ծրագրերի ուսումնառության տևողությունը 3 տարի է՝ բացառությամբ «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում մասնագիտության» (4 տարի):

Ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- 9-ամյա կամ 12-ամյա կրթության վկայական.
- 3x4 չափի 4 լուսանկար.
- անձը հաստատող փաստաթղթի և սոցիալական քարտի պատճեններ.
- ընդունելության համար վճարի անդորրագիր:

Ընդունելությունը իրականացվում է առցանց dimord.emis.am հարթակում:

Ընդունելությունը կատարվում է 9-ամյա կամ 12-ամյա կրթության վկայականի գնահատականների հիման վրա՝ մրցութային կարգով:

ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջի ընդունելության մասին առավել մանրամասն տեղեկություն ստանալու համար անհրաժեշտ է զանգահարել քոլեջի Կարիերայի կենտրոնի պատասխանատու Լիլիթ Խանզադյանին (հեռ.՝ 010616040) :